

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-422-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին հոդվածով.

«Հոդված 7.1. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին տվյալների տրամադրումը բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից

1. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները տվյալները ստանում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարաններից (այսուհետ՝ մարզպետարան): Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները տվյալները ստանում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից (այսուհետ՝ վարչություն):

2. Ռեգիստրը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին (Երևանի քաղաքապետարանին) է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեգիստրում հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) համայնքում հաշվառված անձանց անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման հասցեն, հանրային ծառայությունների համարանիշը.

2) անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ սերիան և համարը, հաշվառման օրը, ամիսը, տարին, անձնագիրը տվող մարմնի ծածկագիրը, վավերականության ժամկետը.

3) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

4) քաղաքացիությունը (երկքաղաքացիության դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը).

5) կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը).

6) հաշվառման ամսաթիվը.

7) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու դեպքում՝ նշում դրա մասին:

3. Ռեզիստորը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին (Երևանի քաղաքապետարանին) է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեզիստորի հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) համայնքում բնակության վայրի հասցեով հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) անունը, հայրանունը, ազգանունը.

2) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) հաշվառումից դուրս գալու ամսաթիվը:

4. Սույն հոդվածով սահմանված տվյալները, իսկ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նպատակով լրացուցիչ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ նաև այլ տվյալներ, ըստ համայնքների, համապատասխան մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին) տրամադրում է վարչությունը՝ էլեկտրոնային կրիչներով:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ